ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, արտաբյուջետային միջոցների օգտագործման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 20/3 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ իրականացնել վերահսկողություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, արտաբյուջետային միջոցների օգտագործման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի ապահովման, պետական սեփականության կառավարման և օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Վերահսկողության առարկան՝ Իրականացնել վերահսկողություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում՝

- Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման,
- Արտաբյուջետային միջոցների օգտագործման,
- Բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի ապահովման,
- Պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Վերահսկողության իրականացման ժամկետը՝ 2016 թվականի հունիսի 20-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը:

<u>Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը</u>՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016թ-ի հունվարի 1-ը:
<u>Վերահսկողության ձևերը</u>՝ Դիտարկում, վերլուծություն:
<u>Վերահսկողության տեսակները՝</u> Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության և ֆինանսական վերահսկողության տեսակները:

Վերահսկողության ընթացքում վերահսկվող օբյեկտի մասին նախնական պատկերացում կազմելու համար իրականացվել է տեղեկատվության հավաքագրում և փաստաթղթերի ուսումնասիրություն:

<u>Վերահսկողության արդյունքները</u>՝

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների վերաբերյալ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսավորումը <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն իրականացվում է պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար գանձվող ծառայությունների վճարների հաշվին: Համաձայն սույն օրենքի 72-րդ հոդվածի 4-րդ կետի, այն է՝ <<Եկամուտների և ծախսերի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների բնագավառում լիազորված պետական մարմնին տրվում են հաշվետվություններ>>:

Ըստ Կոմիտեի կողմից լիազորված պետական մարմնին 2015 թվականի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ներկայացված հաշվետվության, Կոմիտեի ստորաբաժանումների մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներ նախատեսվել են 4,181,799.5 հազ. դրամ, փաստացի եկամուտները կազմել են 3,230,133.9 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2015թ-ի ընթացում ստացված եկամուտներն ըստ տարածքային ստորաբաժանումների՝

Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	Գումարը /հազ.դրամ/
1	Երևան տարածքային ստորաբաժանում	1,766,688.1
2	Մարզերի միավորված ստորաբաժանում	596,666.1
3	Արարատի տարածքային ստորաբաժանում	211,271.2
4	Սյունիքի տարածքային ստորաբաժանում	104,306.4
5	Տավուշի տարածքային ստորաբաժանում	75,428.1
6	Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանում	72,102.9
7	Լոռի տարածքային ստորաբաժանում	178,547.3
8	Շիրակ տարածքային ստորաբաժանում	158,760.1
9	Վայոց Ձոր տարածքային ստորաբաժանում	33,696.1
10	Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	27,946.6
11	Այլ եկամուտներ	4,721.0
	Ընդամենը	***3,230,133.9***

2015թ-ին ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 840,115.9 հազ. դրամ, այդ թվում՝

1. **Պետական տուրք՝ 819,927.8 հազ. դրամ, որից՝**

   Ա. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝ 819,404.8 հազ. դրամ,

   Բ. Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների /գործողությունների/ մատուցումը հաստատող փաստաթղթերի /վկայականների/ տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար՝ 340.0 հազ. դրամ,

   Գ. Անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական տալու համար՝ 183.0 հազ. դրամ:

2. Կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից /2014թ-ի համար / մուտքեր՝ 16,328.8 հազ. դրամ:

3. Վարչական օրենսգրքով սահմանված տուգանքներից և պատժամիջոցներից մուտքեր՝ 51.3 հազ. դրամ:

4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր՝ 3,808.0 հազ. դրամ:

Կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2015թ-ին ստուգումներ են իրականացվել ՀՀ 10 մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչություններում: Տեսչության կողմից ՀՀ մարզպետարաններին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 70 համայնքների պաշտոնատար անձանց 17,300.0 հազ. դրամ գումարի չափով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետարանների կողմից կայացվել է թվով 28 համայնքների պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ 3,700.0 հազ. հազ. դրամի չափով: 2015թ-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է ընդամենը 3,808.0 հազ. դրամ, այդ թվում 2015թ-ին կիրառված վարչական տույժերից գանձվել է 2,000.0 հազ. դրամ, իսկ 1,808.0 հազ. դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից:

Դիտարկման ընթացքում Կոմիտեում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված կադաստրային գործերի ուսումնասիրություն չի իրականացվել:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2015թ-ի ծախսերի վերաբերյալ

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն Կոմիտեի տարեկան ծախսերը պլանավորվում և իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով, հետևյալ ուղղություններով՝

1) ընթացիկ ծախսեր.
2) ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր,
3) պահուստային հիմնադրամի ձևավորում,
4) խրախուսման ֆոնդ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է Կոմիտեի կողմից 2015 թվականի ընթացքում նախատեսված և փաստացի կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

Հազ. դրամ

Ծախսային հոդվածներ	Ճշտված պլան	Փաստացի
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	2,377,421.4	2,037,858.0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	518,924.7	180,389.4
Քաղաքացիական,դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	124,900.2	109,552.0
Էներգետիկ ծառայություններ	125,070.0	86,937.4
Կոմունալ ծառայություններ	1,826.6	1,488.0
Կապի ծառայություններ	27,795.9	25,975.3
Ապահովագրական ծախսեր	2,000.0	1,853.3
Արտագերատեսչական ծախսեր	38,744.0	38,712.4
Գույք և սարքավորումների վարձակալություն	64,000.0	63,677.0
Ներքին գործուղումներ	12,000.0	7,680.3
Արտասահմանյան գործուղումներ	10,000.0	1,374.0
Վարչական ծառայություններ	500.0	150.0
Տեղեկատվական ծառայություններ	9,100.0	5,563.1
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	29,500.0	20,366.0
Մասնագիտական ծառայություններ	89,000.0	81,068.7
Ներկայացուցչական ծախսեր	5,000.0	1,796.3
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	30,000.0	28,361.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	28,000.0	24,744.2
Գրասենյակային նյութեր	35,000.0	18,280.3
Տրանսպորտային նյութեր	55,597.3	51,682.1
Կենցաղային նյութեր	5,000.0	2,715.5
Պարտադիր վճարներ	6,000.0	2,919.6
Պահուստային միջոցներ	5,000.0	0.0
Վարչական սարքավորումներ	53,400.0	22,831.7
Ոչ նյութական հիմնական միջոցներ	17,000.0	16,920.0
Գեոդեզիական քարտեզագրման ծախսեր	497,419.4	496,638.1
Նախագծահետազոտական ծախսեր	2,000.0	600.0
Ընդամենը	***4,181,799.5***	***3,330,133.7***

Դիտարկմամբ ընտրանքային կարգով տեղեկատվության հավաքագրում է իրականացվել ներքոնշյալ ծախսերի վերաբերյալ:

<<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Համաձայն Կոմիտեի 2015թ-ի ներկայացված հաշվետվության նախատեսված ծախսերից <<Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների, պարգևատրումների և խրախուսումների>> համար նախատեսվել են իրականացնել 3,021,246.3 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսերը կազմել են 2,327,799.4 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվություն <<Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների, պարգևատրումների և խրախուսումների>> վերաբերյալ՝

Հ/Հ	***Կառուցվածքային ստորաբաժանում***	***Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ***	***Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ***	***Քաղաքացիական ծառայողների պարգևատրում***
1	Կենտրոնական ապարատ	443,596.5	24,464.3	20,643.6
2	Սպասարկման գրասենյակներ	536,214.9	47,232.3	31,845.6
3	Գեոդեզիայի և հողային պետական տեսչություն	40,997.6	3,735.3	2,580.4
4	Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	121,920.0	13,755.9	654.3
5	Երևան տարածքային ստորաբաժանում	277,050.1	26,849.4	16,642.0
6	Մարզերի միավորված ստորաբաժանում	207,206.0	23,985.7	11,640.6
7	Արարատի մարզային ստորաբաժանում	68,669.5	6,392.2	4,617.8
8	Սյունիքի մարզային ստորաբաժանում	45,327.0	4,033.2	2,699.0
9	Տավուշի մարզային ստորաբաժանում	43,178.9	4,173.2	2,108.3
10	Գեղարքունիքի մարզային ստորաբաժանում	76,200.0	7,320.2	4,930.8
11	Լոռի մարզային ստորաբաժանում	73,076.9	9,195.1	4,683.4
12	Շիրակի մարզային ստորաբաժանում	64,990.3	6,962.0	3,576.6
13	Վայոց ձորի մարզային ստորաբաժանում	39,430.3	2,290.6	2,929.6
	Ընդամենը	***2,037,858.0***	***180,389.4***	***109,552.0***

Կոմիտեին 2015թ-ին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացվել է 100,000.0 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 24.12.2015թ-ի թիվ 1570-Ն որոշման 4-րդ կետի համաձայն, այն է. <<2015թ-ի 9 ամսում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին հատկացված 100,000.0 հազ. դրամը ձևակերպել որպես ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածով) հատկացում կոմիտեին>>:

Գույքի վարձակալության վերաբերյալ

Կոմիտեն ՀՀ-ում գործող թվով 16 սպասարկման գրասենյակների և թվով 4 տարածքային ստորաբաժանումների գործառույթների ապահովման համար վարձակալել է 3848.5 քմ տարածք, տարեկան վարձավճարի չափը կազմել է 63,680.5 հազ. դրամ: Թվով 12 սպասարկման գրասենյակների զբաղեցրած տարածքները հանդիսանում են համայնքային սեփականություններ, իսկ 4 սպասարկման գրասենյակների և 4 տարածքային ստորաբաժանումների զբաղեցրած տարածքները վարձակալվել են մասնավոր անձանցից: Համայնքներից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը կազմել է 2.4-ից մինչև 6.0 հազ. դրամ, իսկ մասնավոր սեփականատերերից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը՝ 8.6 հազ. դրամից մինչև 49.2 հազ. դրամ:

<<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

<<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածով կատարված ծախսերից առանձնացվել են առավել խոշոր հետևյալ ծախսերը՝

<<Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն>> ստորաբաժանման, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների, ՀՀ-ում մշտապես գործող ռեֆերենց կայանների, ինչպես նաև կոմիտեի գերատեսչական ցանցում ներառված այլ հանգույցների միջև տվյալների փոխանակման, տեղեկատվական, գերատեսչական համակարգչային ցանցի սպասարկման

ծառայությունների ապահովման համար կնքված պայմանագրով ծախսվել է 58,548.0 հազ. դրամ:

Կոմիտեի մասնագետների ու աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման, տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքների կատարման համար 27.03.2015թ-ին Կոմիտեի և <<ՈՒսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ի միջև կնքվել է 10,732.0 հազ. դրամ պայմանագիր, փաստացի ֆինանսավորումը կազմել է 8,565.0 հազ. դրամ: 2015թ-ին ՊՈԱԿ-ի կանոնադրության 31-րդ կետով ամրագրված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները կազմել են 1,330.0 հազ. դրամ:

<<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

<<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածով կատարված ծախսերից առանձնացվել են առավել խոշոր հետևյալ ծախսերը՝

Մարզերի միավորված ստորաբաժանման վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման համար Կոմիտեն 2015թ-ին ծախսել է 14,667.5 հազ. դրամ:

Կոմիտեի աշխատակազմի Կոմիտաս 35/2 վարչական շենքի 12-րդ հարկի ընթացիկ նորոգման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 9,776.0 հազ.դրամ:

<<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

2015թ-ին տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման համար ծախսվել է 3,000.0 հազ. դրամ:

Ներդրված համակարգչային տեխնիկայի սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռք բերման համար 2015թ-ին ծախսվել է 21,744.5 հազ. դրամ:

<<Տրանսպորտային նյութեր>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

<<Տրանսպորտային նյութեր>> հոդվածով կատարված ծախսերից առանձնացվել են առավել խոշոր հետևյալ ծախսերը՝

13.01.2015թ-ին Կոմիտեի և <<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, գումարով 53,580.0 հազ. դրամ, 114000 լիտր, բենզինի ձեռք բերման համար, մեկ լիտրը 470 դրամ արժեքով: 2015թ-ին պայմանագրին կից առկա են թվով 9 համաձայնագրեր, սկսած 2015թ-ի ապրիլ ամսից մինչև 2015թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ լիտր բենզինի ձեռք բերման արժեքը սահմանվել է 430 դրամ: Ըստ կատարողական ակտերի 2015թ-ի հունվարից դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ձեռք է բերել 114000 լիտր բենզին, ընդհանուր գումարով 50,160.0 հազ. դրամ /9500*3*470+9500*9*430/, արդյունքում վերը նշված քանակի բենզինի ձեռք բերման համար ծախսվել է 3,420.0 հազ. դրամով պակաս գումար:

<<Ոչ նյութական հիմնական միջոցներ>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

<<Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ>> էլեկտրոնային համակարգում ծրագրային փոփոխությունների և լրացումների իրականացման ծրագրային ապահովման մշակման համար կատարվել է 8,400.0 հազ. դրամի ծախս:

Կոմիտեի www-e-cadastre.am պաշտոնական կայքի էլեկտրոնային համակարգի զարգացման ծրագրային ապահովման և մշակման համար ծախսը կազմել 8,420.0 հազ. դրամի:

<<Գեոդեզիական քարտեզագրման ծախսեր>> հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Ա. Կադաստրային քարտեզագրման աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Կոտայքի մարզի Հանքավան, Պռոշյան, Նուռնուս, Գեղարդ, Ջրաբեր և Գեղարքունիքի մարզի Արփունք, Ծակքար, Տորֆավան Ծովինար և Փոքր Մասրիկ համայնքների 31992.28 հա կադաստրային քարտեզագրման աշխատանքների կատարման համար ծախսը կազմել է 111,814.9 հազ. դրամ:

<<Գեոդեզիայի և քարտեզագրման>> ՊՈԱԿ-ը վերը նշված աշխատանքների կատարման համար գնման գործընթացին չի մասնակցել, սակայն իր կանոնադրության

համաձայն իրականացնում է նաև <<Կադաստրային քարտեզագրման աշխատանքներ>>:

Բ.<<Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն>> ՊՈԱԿ

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի շրջանակներում իրականացվող հետևյալ բյուջետային ծրագրերը:

Հ/Հ	***Պայմանագրի կնքման ամսաթիվը***	***Պայմանագրի առարկան***	***Պայմանագրային գումարը /հազ.դրամ/***
1	02.02.2015	Թեմատիկ քարտեզագրում	9,974.6
2	02.02.2015	Գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության /ժամանակի/ միասնական նորմաների ստեղծում	28,258.7
3	02.02.2015	ՀՀ պետական կառավարման և ՏԻՄ-երի շահառուների համար Գյումրի քաղաքում /1396.1 հա/ բազայի երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրման հիմքի ստեղծում	64,108.1
4	02.02.2015	Աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքներ	9,970.0
5	02.02.2015	Տեղագրական քարտեզագրության բնագավառում նախատեսվող աշխատանքներ	71,514.2
6	02.02.2015	ՀՀ տարածքում պետական բարձունքային հենանիշերի և դրոշմանիշների ուսումնասիրում և թարմացում	41,263.2
7	02.02.2015	ՀՀ տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման,GPS դիտարկման և նիվելիրացմա, տրանսֆորմացիոն նոր գործակիցներով կորդինատների վերահաշվարկում և կատալոգների կազմում	19,260.9
8	02.02.2015	Գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գիոդինամիկական պոլիգոնի ստեղծում	68,965.4
9	02.02.2015	ՀՀ Արագածոտնի,Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացման և WGS-84 համաշխարհային գեոդեզիական կորդինատայինհամակարգում միասնականհիմքի ստեղծում	57,189.5
10	21.04.2015	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ուսումնականքարտեզների ձևավորում և կազմում	14,518.6
			385,023.2

Համաձայն Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության ՊՈԱԿ-ի եկամուտները կազմել են 392,019.2 հազ. դրամ, որից պետական բյուջեից հատկացումները կազմել են 385,819.2 հազ.դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 5,686.6 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի 2015 թվականի ծախսերը կազմել են 392,290.4 հազ. դրամ, որից ընթացիկ ծախսեր՝ 388,335.4 հազ. դրամ և կապիտալ ծախսեր՝ 3,955.0 հազ. դրամ:

Եզրակացություն

1. Կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2015 թվականին մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներ է նախատեսվել 4,181,799.5 հազ. դրամ, փաստացի եկամուտները կազմել են 3,230,133.9 հազ. դրամ:
2. <<Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների, պարգևատրումների և խրախուսումների>> համար նախատեսվել են իրականացնել 3,021,246.3 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսերը կազմել են 2,227,799.4 հազ. դրամ: ՀՀ կառավարության 24.12.2015թ-ի թիվ 1570-Ն որոշմամբ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարների>> համար 2015թ-ին Կոմիտեին տրամադրվել է 100,000.0 հազ. դրամ:
3. Կոմիտեն ՀՀ-ում գործող թվով 16 սպասարկման գրասենյակների և թվով 4 տարածքային ստորաբաժանումների գործառույթների ապահովման համար վարձակալել է 3848.5 քմ տարածք, տարեկան վարձավճարի չափը կազմել է 63,680.5 հազ. դրամ: Թվով 12 սպասարկման գրասենյակների զբաղեցրած տարածքները հանդիսանում են համայնքային սեփականություններ, իսկ 4 սպասարկման գրասենյակների և 4 տարածքային ստորաբաժանումների զբաղեցրած տարածքները վարձակալվել են մասնավոր անձանցից: Համայնքներից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը կազմել է 2.4-ից մինչև 6.0 հազ. դրամ, իսկ մասնավոր սեփականատերերից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը՝ 8.6 հազ. դրամից մինչև 49.2 հազ. դրամ:

4. Կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2015թ-ին ստուգումներ են իրականացվել ՀՀ 10 մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչություններում: Տեսչության կողմից ՀՀ մարզպետարաններին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 70 համայնքների պաշտոնատար անձանց 17,300.0 հազ. դրամ գումարի չափով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետարանների կողմից կայացվել է թվով 28 համայնքների պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ 3,700.0 հազ. հազ. դրամի չափով: 2015թ-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է ընդամենը 3,808.0 հազ. դրամ, այդ թվում 2015թ-ին կիրառված վարչական տույժերից գանձվել է 2,000.0 հազ. դրամ, իսկ 1,808.0 հազ. դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից:
5. 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից <<Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն>> ՊՈԱԿ-ի եկամուտները կազմել են 392,019.2 հազ. դրամ, որից պետական բյուջեից հատկացումները կազմել են 385,819.2 հազ.դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 5,686.6 հազ. դրամ:
6. Կոմիտեի մասնագետների ու աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման, տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքների կատարման համար Կոմիտեն <<ՈՒսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ին փաստացի ֆինանսավորել է 8,565.0 հազ. դրամի չափով և 2015թ-ին ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները կազմել են 1,330.0 հազ. դրամ:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների համար մասնավոր անձանցից վարձակալված տարածքների տարեկան վարձավճարների գումարները իջեցնելու ուղղությամբ:
2. Առաջարկել <<Գեոդեզիայի և քարտեզագրության>> և <<ՈՒսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ներին իրենց ոլորտում համապատասխան ակտիվություն ցուցաբերել և ձեռնարկել միջոցառումներ հայտարարված մրցույթները շահելու ուղղությամբ, որը ձեռնարկատիրական գործունեության ոլորտներում ՊՈԱԿ-ներին կապահովի լրացուցիչ եկամուտներ:
3. Հաշվի առնելով գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից արձանագրված և փաստացի մուտքագրված գումարների զգալի տարբերությունը՝ առաջարկում ենք հետևողական լինել և ձեռնարկել միջոցառումներ փաստացի արձանագրված և ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների միջև տարբերությունը նվազեցնելու ուղղությամբ: